— Նա չափազանց բարի մարդ է, նրան մինչեւ անգամ կարելի է առաքինի կոչել: Միայն նրա անցեալ մեղքերը այն աստիճան ծանրացած են նրա սրտի վրայ, որ ամէն յոյս նրա մէջ մեռել է: Նա չէ կարողանում հաւատացնել իրան, որ աստծոյ անսահման գթութիւնը ներումն է շնորհում ամէն մի զղջացողին եւ, այդ պատճառով, թշոառ ալեւորը գտնւում է խղճի մշտական տանջանքի մէջ:

Այդ միջոցին մօտեցաւ մեզ Մուրադի միւս ընկերը, որը գնացել էր հեռաւոր դէզերից ձիաների համար խոտ բերելու: Ես խնդրեցի Մուրադից, որ ծանօթացնէ իր ընկերի հետ:

— Դուք, կարծեմ ծանօթ էք, — ասաց նա խորհրդաւոր ձայնով: — Դուք մի անգամ տեսել էք նրան արաբական մինարեթում... Յիշո՞ւմ էք:

— Յիշում եմ... եւ ձեզ... — աւելացրի ես:

— Այո՛, եւ ինձ... — խոստովանեցաւ նա: — Ես եւ նա միասին էինք...

— Նրան կոչում են Ջալլադ, այդպէս չէ՞:

— Այդպէս է:

Այժմ մեր մէջ ոչինչ տարակուսանք չմնաց. մենք ճանաչում ենք միմեանց. մենք հին ընկերներ եւ բարեկամներ էինք:

Տաղաւարից լսելի եղաւ Ասլանի ձայնը, որ պատուիրեց ձիաները պատրաստել: Առաւօտը դեռ նոր էր բացւում, երբ ճանապարհ ընկանք: Ալեւոր «գուշակողը» տուեց մեզ իր օրհնութիւնը եւ բարեմաղթեց «յաջողութիւն»: Այդ բարեմաղթութիւնը լսում էի ամէն անգամ, երբ բաժանւում էինք մեր բարեկամներից: Շեյխի բանակում դեռ քնած էին. ոչինչ շարժում չէր երեւում: Միայն անքուն գիշերապահները հեռուից ձայն էին տալիս միմեանց:

ԻԳ. ՈՍՏԱՆ

— Այսուհետեւ երկիւղալի տեղերով պէտք է անցնենք, — զգուշացրեց Մուրադը, խորհուրդ տալով, որ մեր զէնքերը պատրաստ պահենք:

Նա առաջ ընկաւ, իսկ նրա ընկերը, Ջալլադը, գալիս էր մեր ետեւից: Ես ու Ասլանը պատսպարուած էինք երկուսի մէջտեղում: Լսելով Մուրադի խօսքերը, ես իսկոյն յիշեցի նապաստակին, չէ՞ որ պէտք է մի բան պատահի, մտածում էի ես եւ անպատճառ՝ վատ բան:

Ճանապարհը սարսափելի էր: Անցնում էինք Արտոսի ոլորապտոյտ ձորերով, նեղ փապարներով եւ մթին կիրճերով: Մարդ կարող էր բոլորովին կորչել, անհետանալ այդ խորին անդունդների մէջ: Բայց մեր առաջնորդին